ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Արմեն Աբրոյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Բելգիայի Թագավորության ք. Բրյուսել, 2019թ. սեպտեմբերի 16-ից 17-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   Եվրոպական Հանձնաժողով:

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն <<ԵՄ-ն՝ Թվայնացման համար. աջակցելով թվային տնտեսությանն ու հասարակությանը Արևելյան Գործընկերությունում>> (Ծրագիր) ղեկավար կոմիտեի առաջին հանդիպմանը:

6. **Քննարկված թեմաները.**
   Հայկական պատվիրակության կազմի մեջ մտնող ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Արմեն Աբրոյանը, Նախարարի խորհրդական Գայանե Սերոբյանը և Նախարարության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Շաքե Մեժլումյանը մասնակցել են Ծրագրի Ղեկավար կոմիտեի առաջին նիստի, որի հիմնական նպատակն էր Ծրագրի ներքո ներկայիս հիմնական արդյունքները, մարտահրավերներն ու նախատեսվող միջոցառումները ներկայացնելը:

   Քննարկումներ են անցկացվել Արևելյան Գործընկերության երկրներում թվային տնտեսության և հանրության զարգացման ուղղությամբ համատեղ նախաձեռնությունների իրականացման հնարավորությունների ուսումնասիրության, մասնավորապես՝ <<ԵՄ-ն՝ Թվայնացման համար>> ծրագրի 6 հիմնական ուղղությունների (հեռահաղորդակցություն, էլեկտրոնային առևտուր, էլեկտրոնային առողջապահություն, թվային հմտություններ, կիբեռանվտանգություն, ինչպես նաև

ստրատափ էկոհամակարգեր) շուրջ, որոնք հերթականությամբ ներկայացվել են առանձին հատկացված թեմատիկ քննարկումների ժամանակ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ղեկավար կոմիտեի նիստի ընթացքում քննարկվել են Ծրագրի շրջանակում համագործակցության հնարավորությունները:

Ա. Աբրոյանը ներկայացրել է բարձր տեխնոլոգիական ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած քաղաքականությունը, տեսլականը և առաջնահերթ ուղղությունները, այդ թվում՝ թվայնացման ուղղությամբ իրականցվող աշխատանքները, մասնավորապես՝ Նախարարի տեղակալը նշել է, որ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գերակա խնդիրներից մեկը երկրի կենսական նշանակություն ունեցող ոլորտների թվայնացում ապահովելն է, որն իր հերթին մեծապես կնպաստի Հայաստանի կողմից <<2020թ. համար ԵՄ 20 արդյունքների>> շրջանակներում Արևելյան Գործընկերությունում թվային շուկայի ներդաշնակեցման համընդհանուր ջանքերին:

8. Հանդիպման ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Նիստի մասնակիցներն ընդունել են Ծրագրին մասնակցության շրջանակներում փորձի և հմտությունների փոխանակման, օգտակար կապերի ստեղծման, ինչպես Արևելյան Գործընկերության, այնպես էլ Արևելյան Գործընկերության և ԵՄ երկրների միջև համատեղ պիլոտային նախագծերի խթանման անհրաժեշտությունը: Պայմանավորվածություն է ձեռք բերվել՝ Ղեկավար կոմիտեի աշխատանքի միջոցով հնարավորինս սերտ համագործակցություն ապահովելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

Արմեն Աբրոյան

23.09.2019թ.